

խուած չէ իր նմաններու թիւէն: Անոր համար կը սիրէ իր դիւցազներն անցնել այս դատարկ հորիզոններու մէջէն որոնց մէջ միակ հոգիները պիտի ըլլան:

Ենովքայ գիրքը, Անդաթ, Ֆիրդուսի, Արեւելքը. — ահաւասիկ Լամարթինի աւելցեալն աղբիւրները. եթէ բոլոր անոնց թելադրութիւնները միացուին, շատ քիչ բան կը մնայ իրեն. բայց միջադէպերը մարմինն են. աւելի աննշան ալ են. ըզգեստն են անոնք. Լամարթին է որ տուած է անոնց հոգին, և ամենէն ազնուակամն ենքէն մին. — իրենը:

Բայց ի այս զգայնութենէն որով քերթուածը տոգորուած է, նա գործն է մտքի մը՝ որ դրութիւն մը ստեղծել կ'ուզէ. Նախնական ցրքի դրուագը կ'ապացուցանէ զայդ ըստ բաւականի. Լամարթին՝ Մուրէն և Պայրընէն աւելի բարոյականի մը մտահոգութիւնն ունի. կը ձգտի նաև բանի մը՝ որ կը պակսի անոնց քով. — իմաստասիրութեան: Կեդարու արկածները աւելի խոր իմաստ մ'ունին՝ քան անմեղութեան եղծումը միայն. իր դրութեան բանաստեղծական արտայայտութիւնն է ան. Լամարթին իր դարու կուսակցութեանց հաշտութիւնը կ'ուզէր, հաւատքի միացումը բանաստեղծութեան հետ. — ոչինչ աւելի լաւ կրնար պատկերել այդ տենչը՝ ինչպէս հրեշտակ մը որ կ'իջնար երկրի վրայ ապրելու:

Հ. Կ. Տ. ՍԱԼԱԿԵԱՆ

Ֆիրդուսի 1908

ՎԵՐՁ

Ե Ղ Բ Օ Ր Տ Ե Ղ

(Ե. ՊՕԼԻՏԻԿՈՎՍԿԱՅԱ — ՄԻԽԱՅԼՈՎԱՅԻ)

Դ.

Կարելի է երևակայել, թէ ինչպիսի՞ զգացումով վերադարձաւ Մարիան իրենց գիւղը: Փողը, թէև ձեռք բերած ծանրատար և միանգամայն դառն աշխատութիւնով, չունէր արժէք... սակայն անպատուած սիրոյ զգացումն, առաջի և մաքուր սիրոյ, խիստ խաբած լինելը... Այդ չէր կարողանում նէ ներել Ալէքսէյին:

Համագիւղացիների հետ յարաբերութիւն չ'անելու համար, որոնք հետաքրքրւում էին պատած գէպքով և հարցեր տնդում ներա պիւին, Մարիան սկսեց փակւած կեանք վարել: Ինքը ոչ մի տեղ չէր գնում և խրճիթի մօտ ոչ ոքի չէր թողնում: Եկաւ իւանը դաշտային աշխատանքը վերջացնելուց յետոյ. փող, ի հարկէ, չ'բերեց, բայց Մարիան ոչինչ չ'առեց նրան, որ, կ'սասես դա իրեն չէր վերաբերում:

Ոտամաններ կարկատելը նրան հնարաւորութիւն էր տալիս իր ժամանակը անցկացնելու գինեւուններում ու ճաշարաններում, իսկ երբ որ փող չէր ունենում, նա խմում էր ուրիշի հաշիւին « ապագայում աշխատելու » խոստումով: Պատահում էր, որ երկու, երեք օրով կորչում էր, վերադառնում էր առանց զգեստների, քնում էր ամբողջ տիւ և զիշեր և նորից գնում: Առաջ այդ տեսակ կենցաղավարութիւնը յանդիմանութիւն ու կշտամբանք էր յարուցանում Մարիայի կողմից, իսկ այժմ նէ այդ բոլորին նայում էր սառնասրտութեամբ, անտարբերութեամբ. և միայնակ անցկացրեց աշնանային տխուր երեկոյնները:

Ծննդեան տօներին երկու շաբաթ առաջ լուր տարածեց, որ Ալէքսէյը կնոջ հետ գալու է. իր քրոջ մօտ հիւր. մարա Մարիայի սիրտը, կ'ասես թէ դատաւճիռ կարգացին ներան:

Որովհետև Ծննդեան տօնը զուգահիսկում

ՀՈՎԻԻ Ազգային Հասարակական

Գրական Շաբաթաբերդ: — Դ տարի 1909. — Բաժանորդագրութիւնը՝ Ռուսաստանի համար տարին 4 ռ. Արտասահման 12 ֆր. Հասցէն՝ Rédaction de la Revue arménienne « Hovive »

(Russie Caucase) TIFLIS

էր Լիպկովեան ծխական տաճարի տօնին, — շատ հիւրեր եկան. ամենուրեք նկատուում էր կենդանութիւն, միայն Մարիայի խրճիթում տիրում էր մեռելային անդորրութիւն և եթէ ճրագի աղօտ լոյսը չ'լիներ, կարելի էր կարծել, թէ այնտեղ ո'չ ոք չ'ի բնակւում:

Մի անգամ երեկոյեան, վերադառնալով տուն, իւանը ասաց ցրոջը, թէ՛ եղել է Աւէքսէյ իւանովիչի մօտ հիւր, որի կինը շատ սիրուն է և հագնւած է շքեղ, ինչպէս Մօսկովայի օրերողները:

Գոռնատեց Մարիան, ոտքերն ու ձեռները դողացին, իսկ իւանը շարունակեց.

— Անըան գեղեցիկ, որպէս «պատկեր», որ մարդ չի՛ կարող երկար նայել ներան:

— Լո՛ւր, վան՛կա, մի՛ քրքրիւ իմ սիրտը: Խիղճ չունիս դու: Կ'սասես թէ՛ չը գիտես, ինչպէս վրաս ծաղրեց:

— Ինչ ծաղր: Դու ջահէլ չես. ինքդ կարող էիր դատել, յարմար ես՝ դու նրան:

— Լո՛ւր, նորից պոռայ Մարիան նրա վրայ:

— Ես կը լռեմ, իսկ նա հիւր պիտի գայ մեզ մօտ վաղը և պէտք է նրան հիւրասիրել, — ասաց իւանը, մեկնելով դուռանի վրայ:

— Հի՛ւր, զարմացած արտասանեց Մարիան: Դո՛ւ նրան կանչել ես հիւր:

— Կանչել եմ: Ամենքի համար տօն է, իսկ մենք մարդ չ'ենք, ինչ է:

— Նա իմ թշնամին է, վերաւորոզը, իսկ դու դեռ նրան հիւր ես կանչում: Ես խոստացել է զալու:

— Անպատճառ, ասում է, կ'գամ:

— Իսկ նրա կի՛նը ինչ ասեց:

— Ոչինչ, միայն երբ ես սկսեցի խնդրել ներան ես, թէ՛ նէ և թէ նա ծիծաղեցին:

— Ծիծաղեցին! Երկուսն էլ ծիծաղեցին, յուզւած ձայնով նկատեց Մարիան: — Իմ վրայ էին ծիծաղում:

— Ես ինչ եմ իմանում, ո'ւմ վրայ: Սրտեղ ուրախ է և ծիծաղում են:

— Ինչպիսի աչքերով պիտի գայ նա մեզ մօտ:

— Ինչո՞ւ չը պիտի գայ որ: Չէ՛ որ չի կողոպտել քեզ...

— Աւելի վատ... Դու գիտես, որ նա... Մարիան ուզում էր ասել եղբորը, ինչպէս Աւէքսէյը խաբել առել է ներա փողերը, բայց զսպեց իրեն...

— Հի՛ւ, ինչպէս կ'ուզես, իսկ վաղը կ'գնամ գիւղը, կը վերցնեմ վերասիւս ե'օղի, ե' նախաճաշիկ... Կը տան ինձ աշխատելու պայմանով:

Մարիան երկար նստած էր սեղանի մօտ՝ թեքած գլուխը ձեռներին: Յանկարծ նէ շտկուեց և ներա աչքերը բռնկեցին չարագուշակ կրակով:

— Լաւ, կանչէ նրան վաղը երեկոյեան, իսկ հիւրասիրելու բան կ'գտնենք, — բազմանշանակ արտասանեց Մարիան:

Ամբողջ հետեւեալ օրը պատրաստութիւն տեսաւ ընդունելու «թանկագին հիւրին», իսկ երեկոյեան մութը ընկնելիս Մարիան՝ իր վրայ առնելով քիւրքը՝ վազեց գիւղը, որ Լիպովից ընդ ամենը երկու վերստի վրայ էր գտնվում: Այդ շէնում ապրում էր մի պառուս կին, որ յայտնի էր իր շրջանում իբր հէքիմ և նոյնիսկ «կախարդ»: Բացի կախարդիչ թոյնից ընդդէմ դաւաճանութեան և հոգեկան տկարութիւնների, պառուս ունէր նա՛կ միջոցներ հիւանդութիւնների դէմ և ղեղեր մկների ու թոռնաւոր միջատների ու սողունների խայթոցի դէմ: Նէ ծածուկ օղիի առուտուր էլ էր անում և շահով դրամ տալիս խիստ մեծ տոկոսներով և հաստատուն զբաղականով: Պառուսին՝ ամենքը յարգում էին և ամենքը վախում, սակայն ամենքը զրնում էին ներա մօտ նէ հոգում էր նրանց կարիքները: Համարեա բոլորովին մութը կոխել էր, երբ Մարիան բաղխեց պառուսի տնակի դուռ:

— Ո՛վ է այնտեղ. հարցրեց Մարիան յին պառուս:

— Աըսինիա—տատի, բաց: Ես Լիպովից եմ, — պատասխանեց Մարիան:

Դուռը բաց արեց պառուսի թոռնիկը, ջահէլ, ամբակազմ աղջիկը ծննդեամբ խուլ ու համբ:

— Ի՞նչ կուզես, ցուրտ կերպով հար-
ցրեց Մարիային պառաւը:

— Բարեւ, տատի՛, — զլուխ տւեց նե-
րան Մարիան:

— Բարեւ, բարեւ, խստօրէն ասաց պա-
ռաւը, — ասա՛, ի՞նչ է հարկաւոր:

— Մի շիշ օղի է հարկաւոր...

— Ո՛չ, ո՛չ, ես այլևս առուտուր չեմ
անում... Իշխանութիւնը հրաման չի՛ տա-
լիս, — զլուխը տարուրերեց պառաւը:

— Ողորմութիւն արա՛, տատի — ջան,
ազատէ ինձ... մեզ մօտ տօն է, մեզ մօտ
հիւրեր են եկել... Երկար ճամբայ է
գիւղ գնալը...

Պառաւը մտածեց, յետոյ ասաց.

— Մի շիշ մօտս ֆեսցել է, ինձ հա-
մար էի պահել, Թո՛ղ այդպէս լինի, կը
զիջանեմ քեզ, միայն տե՛ս, ոչ ոքի այդ
մասին չ'ասես, — խորամանկութիւն բա-
նեցրեց պառաւը:

— Ձեմ ասիւ, տատի—ջան, ո՛չ ոքի
չեմ ասի, — պատասխանեց Մարիան:
Պառաւը նշան արեց լալին, նէ գնաց
նախասենեակը և մի քանի րօպէից բերեց
մի շիշ օղի:

— Ահա, ասաց պառաւը, տալով Մա-
րիային օղին: — Յիսուն կօպէկ է, պա-
կաս չեմ վերցնի, — աւելացրեց նէ:

— Ես ուրախութեամբ կ'տամ յիսուն
կօպէկ, — ասաց Մարիան:

— Հը՛. տուր փողերը ճանապարհւոր,
Աստուած քեզ հետ:

— Հա՛, մէկ էլ պիտի խնդրէի քեզա-
նից, տատի—ջան, մկան դեղ... երկմտօ-
րէն ասաց Մարիան...

— Ի՛նչ! — ծոր արեց պառաւը...

— Շէկ մկների դէմ դեղ, բոլորովին
նուաճել են ինձ...

— Դեղ չ'կայ, բոլորը բաժանել եմ,
— բարկութեամբ նկատեց պառաւը:

— Ես քեզ կ'վհարեմ, տատի—ջան,
ինչքան կուզես ա՛ռ:

— Քեզ ասում են, — մկնդեղ չեմ պա-
հում... Թոյլ չեն տալիս...

— Տատի, ախր դու ուրիշներին տալիս
ես, — համոզում էր պառաւին Մարիան:

— Ուրիշներին ես ճանաչում եմ, իսկ
քեզ՝ առաջի անգամն եմ տեսնում:

— Ես Լիպօկցի եմ, Պեօտը Գօրեա-
չիվի դուստրը... Գուցէ՛, լսած լինիս,
տատի: Լիպկովի գիւղացի էր իմ հայրը
և ես՝ Լիպկոհի...

Մարիան աշխատում էր խօսել հան-
դարտ, բայց և այնպէս նէրա ձեռները
դողում էին և գունատ դէմքը արտայայ-
տում էր ներքին յուզում: Եթէ պառաւը
այդ նկատէր, այն ժամանակ, հաւանական
է, չէր տայ մկնդեղ:

— Ունիմ մօտս չորս հար... Հացի
մէջ խառնի և խրճթի անկիւններում դի՛ր...
Բոլոր շէկ մկները կ'անհետանան, ասաց
պառաւը մի րօպէ մտածելուց յետոյ, —
կոտնալով դուքանի տակ գտնւած սնդուկի
վրայ՝ հանեց այն տեղից Թղթի մէջ փա-
թաթած դեղը և տւեց Մարիային:

— Տե՛ս, կերակրի մէջ չը խառնին
այս հարերը, որ ընկնեն՝ ցաւ է, — աւե-
լացրեց պառաւը:

— Ի՛նչ դժբաղդութիւն կ'լինի որ,
տատի—ջան, — հարցրեց դողողին ձայ-
նով Մարիան:

— Կարելի է մեռնիլ, բարկութեամբ
պատասխանեց պառաւը և ձեռքը մեկնեց
փողը ընդունելու: — Տո՛ւր 20 կօպէկ դեղի
փող: — Մարիան վճարեց օղիի և դեղի
արժէքն. օղին թագցթեց մուշտակի տակ,
դեղը՝ կոնատակին և, գլուխ իջեցնելով
պառաւին՝ վազեց տուն:

Տենդոտ յուզմունքով սկսեց պատրաս-
տութիւն տեսնել ընդունելու « հիւրին »:
Սեղանը ծածկեց մաքուր սփռոցով, դրեց
նրա համար օղի և նախաճաշիկ, հանեց
յատակի տակից մի շիշ կարմիր գինի,
որը պահվում էր յարմար տեղ, պատրաս-
տեց հեշտաեռը. պակայն բոլոր նէրա շար-
ժումների մէջ նկատուում էր ինչ—որ ան-
բնականութիւն, ուժգնութիւն... Ժամանակ
առ ժամանակ կանգ էր առնում խրճիթի
մէջ տեղը, մտածմունքի մէջ ընկնում,
յետոյ նորից շարունակում գործը:

Ժամի 9—ին նախասենեակում լուեցին
քայլեր... Մարեան գունատեց և տարու-

բերեցիով զնաց միջնապատի ետեւը: Դրան շէմքին երևաց իւանը, նրա ետեւից Պրօ-խորովը՝ կոկւած:

— Բա ո՛ր է տանտիրուհին, — նայեց շուրջը զինուորը:

— Այստեղ ո՛ր է է տեղ, — ասաց իւանը:

— Դատի՛ սեղանի մօտ, Ալէքսէյ իւանովիչ: Թէյ կ' իմենք, իսկ յետոյ՝ նախաճաշ, — հրաւիրեց իւանը հիւրին:

Եւրօ սեղանին նստեցին, իւանը կանչեց ըրորը լեցնելու թէյ:

Շփոթւած, զոնաւուած հագիւ ոտաց զրայ կանգնելով, միջնապատի ետեւից դուրս եկաւ Մարիան:

— Իմ խորին յարգանքները, Մարիա Պետրովնա, ուղղուեց նէրան հիւրը:

— Շնորհաւոր սօն:

— Շնորհաւորում եմ ձեր օրինաւոր ամուսնութիւնը, — ողջունեց փոխադարձաբար Մարիան և սկսեց լցնել թէյ:

Ձը նկատելով Մարիայի յուզմունքը, զինուորը ուրախ-ուրախ պատմում էր իր ամուսնութեան պատմութիւնը, ջատագովում էր իր կնիքը, և նրա իւրաքանչիւր խօսքը, ինչպէս դաշոյնի սայր, խրուում էր գծադրէ օրիորդի սիրտը:

Թէյից յետոյ, հիւրը և տանտէրը սկըւ պեցին օգի խմել, և որքան շատ էր խմում հիւրը, այնքան նա դառնում էր շատախօս: Եւրօ խօսակցութեան թելը հասաւ նրա նշանադրութեան և այն մասին, ինչպէս պատահեց, որ նա չ'ամուսնացաւ Մարիայի հետ, նէ ընդհատեց նրան:

— Վերջ տէք, Ալէքսէյ իւանովիչ... Անցեալում չեա վերադարձնի: Ինչո՞ւ էք ախր այդ բանը մտաբերում:

— Ես, Մարիա Պետրովնա, իսկապէս նրա համար եմ եկել, որպէս զի դուք չը բարկանաք վրա... — սկսեց խօսել կրկին սաստիկ հարբած հիւրը — Դուք ինչ կին կարող էիք լինել ինձ:

— Ես առեւ՛ եմ գեղեցկուհի, զրագէտ, և լաւ օժիտ է տւել նէրա վրայ կոմսուհի որի մօտ նէ եղել է առաջի սպասուհին, իսկ դուք գեղջկուհի էք, անկիրթ,

անզարգացած... Ո՛չ զիւր գիտէք, ո՛չ էլ պարել... Արեւ եմ ձեզ առաջարկութիւն անմտածած, իսկ հէնց որ եկայ Մօսկվա և պատմեցի բարեկամներին՝ այնպէս ինձ մասխարայ արեցին...

Մարիան լսում էր, չը բողբոջելով, սաւ կայն յանկարծ նէրա աչքերը փայլատակեցին, պոռչեցրը կրծոտեց, ցնցեցին: Նէ վեր թռաւ տեղից, զնաց միջնապատի ետեւը և դուրս բերեց մատուցարանի վրայ դրած մի շիշ կարմիր գինի և երկու բաժակ:

— Կարմիր գինի չէ՞ք կամենայ — մօտեցրեց նէ զինուորին:

— Ամենայն բաւականութեամբ, եթէ դուք կ' իմէք ինձ հետ միասին, վեր կացաւ դուքանից Ալէքսէյը:

Մարիան լցրեց բաժակները գինի և նոր էր տւել մէկը զինուորին, որ յանկարծ նէրա հետ պատահեց մի ինչ — որ անսովոր բան: Կասես թէ մէկը հրեց նէրան ձեռքից և այնպիսի ուժով, որ շիշը ոստնաց և ընկաւ կողքին: մատուցարանը վաղ ընկաւ ձեռքից, գինին թափուեց, բաժակներն ու շիշը ջարդ ու փշուր եղան:

— Ախ. դու անշնորհք, — պոռաց նէրա վրայ իւանը Մակայն Մարիան ոչինչ չէր լսում... Նէ սաստիկ ուշաթափւած էր:

*
* *

Մի տեղ դադար չ'անող ծերունին, պտպը, որի մասին յիշել էր իւանը պատմածքի սկզբում, եկաւ տուն Ջատկին և համարեա՞ չը նախաւեց Մարիային, այնքան փոխել էր նէ: Մի՛ փորձած և հայտնաբերելով նէրա վրայ, ծերունին գուշակեց, որ մի սաստիկ վիշտ կրծում է նէրա սիրտը, բայց այդ մասին ոչինչ չը հարցրեց: Մի անգու՞ն գիշեր Մարիան ամեն բան պատմեց նրան:

— Անքաւելի է իմ մեղքը, պապիւն, անքաւելի: Թունաւորեւ ուղեցի Ալէքսէյին այն բոլոր չարիքները համար, որոնք թոյլ է տւել իմ վերաբերութեամբ: Մտածում եմ, ինքս կը գոհեմ, բայց և

չարագործին տեղ չի՝ լինիլ լուս աշխարհում... փողերի մասին չեմ ցաւում, Աստուած նրանց հետ, բայց ասի բոլորը տւի, ինչ—որ ուխտած էի: Հաւատում էի, որ չի ձգիլ ինձ, կ'ամուսնանայ, իսկ նա խաբէութեամբ փողերս առաւ և պսակեց ուրիշի հետ... Գոնէ խիղճ ունենար, թէ չէ դեռ թոյլ տեց վրաս ծծաղելու, ամբողջ գիւղին պատմեց... Չը համբերեցի, գնեցի տատի—կախարդից հարբեր, որոնցով չէկ մկներ են թռնաւորում, դրի բաժակի մէջ կարմիր գինիով, հէնց որ համեցէք արեցի նրան, ձեռքս զողաց, բաժակը կոտորեց, գինին թափեց, իսկ թէ յետոյ ինչ է եղել, չեմ յիշում:

— Շնորհակալ եղի՛ր Տէր Աստուածանից նրա մեծ ողորմածութեան համար առ քեզ, որ հեռացրել է զարհուրելի մեղքից: Աղօթի՛ր նրան, որդեակս:

— Աղօթում եմ, պապի—ջան, չեք մեռանդութեամբ աղօթում եմ... Ուխտագնացութեան կ'երթայի, միայն թէ հիմի թոյլ եմ, չեմ կարող:

— Կը զնանք միասին գարնանը... ես ահա վաղուց այցելում եմ սուրբ տեղերը: Սկզբում զժարին էր, իսկ յետոյ ընտելալայ: Ամառը Սօլօմեցկու հրաշագործներին պիտի գնամ: Քրիստոսի անունով եմ հասնում տեղ և քարի մարդիկ օգնում են:

— Սովորեցրու՛, պապի, ինչպէս քաւել իմ մեղքը: Սովորեցրու՛, հայրենական: — Լսել եմ ես մի ճանապարհորդից, որ ծանապատար մեղքերը ուխտ անելով կարելի է միայն քաւել. աշխարհին Տէրը աշխարհի մեղքերը խաշով քաւեց, իսկ զու մէկի մեղքը ընդունէ քեզ վրայ և Տէրը թողութիւն կ'տայ քո մեղքին:

Մտածմունքի մէջ ընկաւ Մարիան: Խոբը սրտի մէջ տպաւորեցին ծերունի պապի խօսքերը:

Գարունը եկաւ: Փշից բարեբեր տաքութիւնը, Զմեռայ ընթացքում պաղած հողը տաքացրին կենանք տուող արեգակի ճառագայթները և այն ծածկեաց առաջի կանաչով. առականբոր կարկաչեցին, ծի-

ծեռնակները սկսեցին ծլվլալ, երկնքում ձայնեցին արտոյտները: Դերունի պապիկն քաշում էր անձանթ հեռուն: Ինչքան խնդրեց նրան Մարիան, մինչև որ գետերը կը մտնեն ափերի մէջ, չը համաձայնեց, գնաց:

Ամրեւելով երկարատե հիւանդութիւնից յետոյ, սկսեց պատրաստութիւն տեսնել և Մարիան: Նէ ամրացրեց իր մերկ տնակը և պանդխտութեան ցուպը ձեռին, պարկը ուսին ճանապարհեց ուխտի: Իւսնն էլ գնաց ուրիշ գիւղ աշխատանքի և երկուսն էլ չը վերադարձան մինչև խորամէջ աշուն:

Մի ամիս և մի քանի օրից յետոյ, երբ նրանք վերադարձել էին տուն, տեղի ունեցաւ վանառականի սպանութիւնը: Ամբողջ տիւ և գիշեր անտառում ձին դէս ու դէն թափառելուց յետոյ ձիաւորի հետ դուրս եկաւ մի շէն, որը Լիպոկից հինգ վերստ հեռաւորութեան վրայ էր գտնուում: Յուզեց ամբողջ հասարակութիւնը այդ շէնի. մեծ ու փոքր վազում էին նայելու անձանթ մարդուն, որը կենդանութեան նշաններ չէր ցոյց տալիս: Վազեցին քաղաք տեղեկացնելու իշխանութեան, իսկ մինչև նրա գալը, սահակը սպանածի հետ պատրաստ կանգնած էր շէնի մէջ տեղը և նրանց ծածկում էր ձիւնը: Այդ մարդու սպանութեան լուրը հասաւ և՛ Լիպոկ, սակայն այդ շէնի բնակիչներից ոչ ոքի մտքովն անգամ չ'անցաւ, որ եղեռնագործը գտնուում է իրենց մէջ:

Մինչդեռ կատարուում էր քննութիւն, իւսնը հիւանդ ձեռնալով, չէր դուրս գալիս տնից: Մարիան անցկացրեց զարհուրելի րօպէներ: Ամենաշնչին շշուկն անգամ խրճիթի մօտ, թխկոց լուսամտին կամ դռնակին՝ ստիպում էր ներսն սարսափահար լինել և ականջ դնել: Չեն գալիս արդեօք մարդիկը, որոնք սպանութեան հետքը գտել են:

— Շատ ես ծախսել փողերից, — հարցրեց մի անգամ եղբորը:

— Փո ի՞նչ գործն է, — կոպիտ պատասխանեց իւսնը:

— Այնպիսի գործ է, որ ես ծածկել եմ քո եղբունագործութիւնը, նշանակում է, ես քո մեղսակիցն եմ: Դու մարդասպան ես, ես՝ եղբունագործ, և երկուսս էլ պէտք է պատասխան տանք: Ես քեզ չեմ յանձնել մինչև ց'այսօր, որովհետև Աստուծոց վախճանում էի, և քեզ դժբաղդիդ խղճում... Հարբեցողութիւնը քեզ հասցրեց մինչև այդպիսի զարհուրելի մեղքի... Դու լսել ես, — քննութիւն են կատարում...

— Շահաւէտ չէ քեզ մատնել ինձ... Միտախն տաժանակիր աշխատանքի կը գնանք:

— Տաժանակիր! — աղաղակեց Մարիան, և ծերունի պապի խօսքերը մի վայրկեանում յարութիւն առան ներս յիշողութեան մէջ...

— Ինչ արած, շղթայակապ կը տանեն: Յանկանալով վախեցնել քոյրը և դրանով լռեցնել տալ, իսանը նկարեց նէրա առջև տաժանակիրների կեանքի պատկերը՝ իր ամենասարսափելի մանրամասնութիւններով: Փանի նա պատմում էր, Մարիայի դէմքը պայծառանում էր, աչքերը՝ շողողում: Յանկարծ նէ վեր թռաւ դուռանից, բռնեց եղբոր ձեռքը և անհաւատալի՝ այդ տեսակ թոյլ կնոջ համար՝ ուժով տարաւ նրան պատկերի առաջ:

— Լսիր, իսան, խօսեց նէ, խեղդելով յուզմունքից ու արատաւներէ: — Երգչի դու ինձ, որ վերջ պիտի տաս հարբեցողութեան, ուրիշի ոչ մի բանը չը պիտի վերցնես, և ես կ'ընդունեմ քո մեղքը իմ վրայ:

— Ինչ ես: Միթէ կարելի է, — համոզում էր իսանը ներսն, մէկ էլ ինչո՞ւ վերցնես քեզ վրայ: Մութ գիշեր էր, ոչ ոք չի՝ իմանալ, թիփին հետքը սրբել է:

— Մարդկանցից կը թազցնես, Աստուծոց՝ երբէք... Մարդկային արիւնը կ'աղաղակէ նրան... Վաղ թէ ուշ կ'իմանան:

— Ինչ անել ինձ, — վախեցած հարցրեց իսանը:

— Երգչի ինձ, և այն ժամանակ կ'ասեմ, ինչ անել:

Իսանը գլուխը բարձրացրեց դէպի սրբի պատկերը:

Խրճիթի մէջ թաղաւորող խաւարի մէջ, որը լուսաւորում էր միայն աղօտ կերպով կանթեղը, խոժոռ ու խիստ նայում էր նրա վրայ սուրբի մութ դէմքը: Սարսափահար եղաւ իսանը: Նա խաչակնքեց երեսին և կրկնեց բարձրաձայն այն ամենը, ինչ որ հրամայեց ասել քոյրը:

— Ո՛ր տեղ ես պահել փողերը: Ինձ հարկաւոր է այդ իմանալ...

— Նախասենեակից տեղափոխել եմ ուրիշ տեղ... գետնի տակ, հողի մէջ եմ պահել, ձախ անկիւնում կիսատակառի տակ: Եթախել եմ, կարելի է 200 ռուբլի մանր թղթաղլամներով... Խոշորները վախեցայ խրդել...

— Այժմ լսի՛ր ինձ: Կ'գան քաղաքից մեզ մօտ, կը սկսեն հարց ու փորձ անել, ասա՛ միայն. « Ոչնչից խաբար չեմ »: Սաստիկ հարբած էի: Որ վաճառականի մասին հարցնեն, ասա՛. Ոչինչ չեմ լսել:

— Իսկ ի՞նչպէս կ'իմանան, հարցրեց իսանը:

— Ո՛չ թէ դու, այլ ես եմ սպանել վաճառականին, — ասաց Մարիան հաստատուն և վաճառականօրէն:

— Իսկ քո խնդրդ տե՛ղ է, Մարիա: — Ես մարդասպան եմ... ուզում եմ յօժար կամքովս ընդունել ինձ վրայ քո մեղքը:

Որքան էլ փչացած ու արատաւոր լինէր իսանը, այնու ամենայնիւ քրոջ որոշումը զարմացրեց նրան, երկար լռեց նա:

— Իսան — ջան, հեկեկաց Մարիան, գրկելով եղբորը... Կարելի է, քեզանից պակաս մեղաւոր չեմ, միայն Աստուած թոյլ չի տալ ինձ յանցագործութեան... ուզում եմ հիմա հոգիս ազատել... Չես համաձայնի տալ ինձ քո մեղքը, ես կ'անամ՝ գիտէի սպանութեան մասին և ծածկեցի: Այդպէս ինչո՞ւ երկուսս էլ տանջւեանք: Կեանքիս վրայ ես չեմ ղողում, անտանելի է դառել ինձ այն...

— Արա՛, ինչ-որ կամենում ես, — համաձայնեց, վերջապէս, իսանը:

*
* *

Մարտի սկզբին, դեռ ևս ձնան ուղիով
Մարիայի տնակին մօտեցաւ սահնակով բա-
նակատեղի պրիստաւն ուրեաղնիկի (կա-
գաւորողի) հետ: Մահւան դուռը հասաւ
Մարիան, և մօտենալով վառարանի վրայ
պակած եզորը՝ կարողացաւ արտասանել.

— «Եկել են»: Բարձրացիր վառարանի
վրայ. եթէ կանչեն, ասա՛, որ հիւանդ եմ:

— Հէնց նոր էր իւանը բարձրացել
վառարանի վրայ, որ, խրճիթը մտաւ բա-
նակատեղի պրիստաւը:

— Ինձ հարկաւոր է իւան Պետրով
Գօրեաչեւը, — ասաց նա բարձրաձայն:

— Ես ինքս եմ, — թոյլ կերպով պա-
տասխանեց վառարանին վրայից իւանը:
— Իշխր, — խտուրթեամբ հրամայեց
պրիստաւը:

— Տկար է՛, տենդը տանջել է նրան.
մէջ մտաւ Մարիան:

— Երկար չեմ պահի, — ասաց պրիս-
տաւը նստելով սեղանի մօտ և դասաւո-
րելով պօրտֆէլը թղթերի հետ:

Իւանը դանդաղ իջաւ յատակի վրայ և
մօտեցաւ պրիստաւին:

— Քեզ յայտնի՞ է արդեօք, որ անցեալ
տարւայ նոյեմբերի վերջերին այս կողմն-
ըը սպանել է մի վաճառական:

— Ասում էին այդ մասին և՛ մեզ մօտ
լիպկում, — պատասխանեց իւանը:

— Իսկ գիտե՞ս, ո՛ւմ են կասկածում
այդ սպանութեան մէջ:

— Դժուար է իմանալ: Քիչ ժողովուրդ
է գնում, գալիս... աշխատում էր խաղաղ
սրտով պատասխանել իւանը:

— Այդ սպանութեան մէջ կասկածում
են քեզ...

— Ինձ! Կ'ասես խելքը թոցրեց ի-
ւանը:

— Նշաններ կայ: Սպանածի ձին ա-
ռանց մի նալի է գտնւել և այդ նալը
գտել են ձեր խրճիթի ետեւը, դարպասի
մօտ: Նալը եկել է ուղիդ ձիւն կնդակին,
մինչև անգամ միխը մտել է իր առաջ-
ւայ տեղը: Ի՞նչ կ'ասես այդ բանին:

Կ'ասես դանակով աւին իւանի գը-
լին: Մի բօպէ ևս, նա կը խոստովանէր
ամեն բան, բայց յանկարծ արագութեամբ
սեղանին մօտեցաւ Մարիան: Ներսէ աչ-
քերը տենդօրէն այրվում էին, երեսին վեր
տուեց կարմիր բծեր:

— Պարոն պրիստաւ, — ասաց նէ հա-
մարձակ, — թողէ՛ք եղբօրս, նա ո՛չ մի
բանի մէջ մեղաւոր չէ:

Եւ եմ սպանել վաճառականին:

— Դ՞ու Մարիան! ազադակեցին բար-
ձրաձայն խրճիթում զոհած գիւղացիք:

— Այո՛, ես եմ սպանել և վաճառա-
կանի փողերը պահել նախասենեակում,
յատակի տակ: Յետոյ վախեցայ պահել
այնտեղ, տեղափոխեցի խրճիթը և թաղե-
ցի անկիւնում, կիսատակառօի տակ: Մարի-
սել եմ ո՛չ աւել 200 ռուբլուց:

Համաձայն այդ ցուցմունքի՝ պրիստաւը
վկաների հետ իջաւ յատակի տակ և զը-
տաւ ցոյց տւած տեղում դրամակիր թը-
սակը:

Սարսափահար աղպիսի անսպասելիու-
թեան, գիւղացիք ապշած նայում էին
Մարիային, իւանն էլ ապշած էր:

— Իսկ «դիտմամբ» չե՞ս ցոյց տալիս
քեզ վրայ, — դիմեց Մարիային Լիպոկի
գիւղացիներէր մէկը: Քո եղբայրը և՛ հաւ-
րեցող է, և՛ սալախանայ, ճանապարհից
բոլորովին շեղած մարդ, իսկ դու՝ հան-
գիստ, Աստուածավախ աղջիկ...

— Հէնց այդպիսիներին էլ խաբում է
չար սատանան, — պատասխանեց Մա-
րիան, և սկսեց խաղաղ ցուցումներ տալ,
որոնք արձանագրում էր պրիստաւը:

«Վաճառականը եկաւ գիշերը, լուսաւ
մուտը ծծեց: Թողէ՛ք, ասում է, բարի
մարդիկ, գիշերել, ճանապարհից շեղե-
լ եմ, Հարցնում եմ եղբօրս, թողնել, թէ
«չէ՛ Ոչինչ չի՛ լսում, խիստ հարբած էր:
Ես բաց արի դարպասը, ձին քաշեցի բա-
կը, ինքս ներս մտայ վաճառականի հետ
խրճիթ: Նա նստեց սեղանի մօտ, խմեց
մի բաժակ օղի, կերաւ ապուխտից: Նրա
կաշու տողարկւում կար օղի և ակրատ:
Խմեց, յետոյ՝ հանեց սերթուկի կողքի

գրպանից դրամակիր քսակը. տեսնում եմ՝ փող շատ ունի... Ահա այս միջնապատի ետևն էի կառկած, արանքներից բոլորը երևում էր։ Համարեց համարեց և ննջեց։ Երկու ժամից ծայն է տալիս ինձ։ Ես վեր կացայ։ Դրամակիր քսակը այլ ևս սեղանի վրայ չ'կար, նորից նա իր գրպանն էր դրել։

Նիրհնչել էր ընդ ամենը մօտ կէս ժամ, յետոյ ասում է. տիրուհի՛ն, ձեզանից մէկը չի՞ առաջնորդի ինձ մինչև Արլեսի մօվկայ։

— Ո՛վ, ասում եմ, ուղեկցէ՛ ձեզ, քանի որ ամրողջ էնը քնի մէջ է, իսկ եղբայրս քաատիկ հարբած է, նրան դժուար է զարթեցնել։ Մինչև անտառ ես, գուցէ՛, ուղեկցեմ, իսկ դէնը ճանապարհը ուղիղ է։ «Առաջնորդէ՛», ասում է։

Հագնեցի ես, դուրս եկայ խրճիթից վաճառականից առաջ, ձին քաշեցի րանջարանոցը, յետոյ վերադարձայ նախասենեակը, կացինը վերցրի յամենայն դէպս։ Գործս կնկայ գործ է, մտածում եմ, գիշերը ե՛ գայլի վրայ կը վազես։ Դուրս եկաւ վաճառականը դարպասից, ես վրայ դրի այն և նստեցի սահնակին նրա կողքին։ Շարժեցինք։ Մտանք անտառը, մութն է և խաղաղ։ Տեսնում եմ՝ վաճառականը նիրհում է, իսկ յետոյ և բոլորովին պարկեց ու քնեց։ Հէնց այդտեղ էլ ծագեց գլխիս մէջ այդ յանցանոր միտքը։ Մտածում եմ. այդպիսի դիպածո՞ւ ալլա չի՞ լինիլ։ Վաճառականի մօտ փող շատ կայ։ Մութ գիշեր է, շուրջս անտառ, բուք, ձեռքիս՝ կացին։ Մտածեցի, մտածեցի, յետոյ վերցրի կացինը և մի հարւած հասցրի գլխին։ Ես դեռ երկու հարւած ևս չուրի նրան։ Լուց։ Այն ժամանակ ես հանեցի նրա մերամակիր քսակը և սլացի դէպի տուն։ Մօտեցայ ետևի դարպասին, ականջ եմ դնում. շուրջը խաղաղ, իսկ ձիւնը այնպէս է՝ թափում փաթիլ-փաթիլ։

Մտայ խրճիթ. եղբայրս քնած է։ Հիմ, մտածում եմ, ո՛չ որ չի տեսել, չի՛ լսել, ծայրերը ջրի տակ։

Մինչդեռ պրիստաւը կը գրէր եղեռնագործի ցուցմունքը, խրճիթ եկան Լիպոկի համարեա բոլոր կանայք։ Կատարելով ըսւոր ձևականութիւնները, պրիստաւը հրամայեց Մարիային հետեւել իրեն ի քաղաք։

«Բանտ կը նստեցնեն», տարածեց ամբոխի մէջ։ Ողբացին կանանիք, արտասուեցին նոյնպէս գիւղացիք, միայն դատաւարտեալը պաղել էր, ո՛չ հառաչում էր, ո՛չ արտասունք կաթեցնում։ Լուռ կերպով հաւաքեց ինչ-որ իրեն հարկաւոր էր հաւաքաւ մուշտակը, աղլուխը կապեց գլխին, աղօթեց Աստուծուն և սկսեց երկրպագել ժողովրդին, աշխարհին։ Հրաժեշտի ողջոյն տալով իւանին՝ հեկեկաց։ Խառն երկրպագեց ներան մինչև գետին։

Առաջնորդելով ողորդ ու ազազակներով՝ Մարիան նստեց սահնակին, որբպատրաստած էր պրիստաւի հրամանով։ Երկու կողմը նստեցին երկու ջիւականներ, որոնք վկայ էին, պրիստաւը գնում էր առջևից և շուտով բոլորը անհետացաւ անտառութիւնից։

*
**

Անցաւ մօտ մէկ տարի։ Զ...սկու նահանգական դատարանի դահլիճը լիքն էր ամեն դատակարգի հասարակութեամբ։ Ամենքը ցանկանում էին ներկայ գտնուել քննութեան ժամանակ ջրէական մի՛ գործի, որը առաջնակարգ տեղ է բռնում թէ՛ մեղաւորեալի քնադրութեան տեսակէտով և թէ՛ յանցանքի ծանրութեան տեսակէտով։

Ներս բերին մեղադրեալին։ Ատենադպիրը կարդաց մեղադրական ակտը։ Հասարակութեան խորհրդաւոր շշուկների ու յուզմունքների մէջ Մարիան կանգնած՝ նիհար, վտիտ, գունատ, բայց պայծառ ու խաղաղ, տալիս էր ցուցումներ։ Նախագահի հարցին՝ «ճանաչում է իրեն մեղաւոր», նէ հաստատականութեամբ պատասխանեց՝ «ճանաչում եմ»։ Փաստաբանին ֆիաց միայն խնդրել դատարանի գիշողութիւնը։ Դատարանը դատապարտեց 4-ամիս տաժանակիր աշխատանքի։

Այդ բոլորից յետոյ, երբ Մարիային ղրկեցին աքաբոր, իւանը՝ խղճի խայթոցից տանջւելով յայտնեց իշխանութեան իր կատարած եղեռնագործութեան մասին և խնդրեց վերադարձնել անմեղ տեղը տանջւած քրոջը, սակայն նրա զղջումն չունեցաւ բաղձալի հետեւանը, Մարիան արդէն մահացած էր ճանապարհին:

*
* *

Այստեղ իմ ուղեկցուհին շտապեց վերջացնել իր պատմածքը, որովհետեւ մեր գնացքը մօտենում էր կայարանին, ուր նէ պէտք է իջնէր: Եւս սրտանց շնորհակալութիւն յայտնեցի ներան՝ իր պատմութեան համար, որ թւաց ինձ այնքան հետաքրքրաշարժ, որ իսկոյն և եթ այնտեղ որոշեցի զրեւ այն, աշխատելով պահել, որքան հնարաւոր է, նկարագրութեան իսկութիւնը, հասարակ և մի և նոյն ժամանակ պատմողի զգացած արտայայտութիւնը, որը եղել էր ականատես իր նկարագրած տխուր պատմութեան:

Թրգմ. ԱՍՏՈՒԾԱՏՈՒՐ ԲԵՎ-ՅՈՎՍ.

ՎԵՐՋ



ՕՐԱԳԻՐ ԱՌԺԱՄԱՅՆ

Ա Ջ Դ Մ Ա Ն Ց Մ Տ Ա Ց Ե Ի Մ Ր Տ Ի

1 8 4 3

Փ Ե Տ Ր Ո Ւ Ա Ր

6

Բանը հպարտը խոռովին զհեզութիւն, որպէս ալիք վերացեալը զվտակս խաղաղականս:

8

Մարմին մարտկոց է հոգւոյ. եթէ տիրեսցէ նմին սատանայ՝ անտի ընդ հոգւոյն մարտնչի, իսկ եթէ հոգի տիրէ նմին՝ յապահովի կայ:

10

Վաղ հասունանան աստուածատունկ բերք, զի շնորհօք հոգւոյն առողանին:

13

Ո՛ր սիրտ է զոր չբացցեն բանալիք սիրոյ:

16

Համբաւ չար երազ է քան զբարին, զի յամենայն կերպարանս կերպարանի, և ընդ ամենայն շաւիղ գնայ:

17

Հեշտութիւն մինչ չե ի քիմս քաղցրացեալ դառնանայ ի խիղճս:

17

Ամենայն յոյս լուսաւոր է, այլ է որ լապտերաց բանտի նմանէ, պա՛րտ իցէ և զայն յոյս կոչել:

19 Յերազի

Մահ յիւս կենաց նաւ պատրաստական անցուցանել զհոգի ի կեանս:

19

Կրկին դէմս ցուցանէ մահ, արդարոց զուարթ, մեղաւորաց՝ դժնդակ:

24

Մանգաղ մահուն հնձէ և զգէն և ըզզարդ:

24

Առ կենդանեաւ ոչ է անմահանալ, այլ անմահութեան պտուղ տալ:

24

Ծայրը մատանց զընարս բանան, և ծայր շրթանց զսիրտս:

25

Ալքատն առ կարօտութեան՝ ճոխն առ յղիութեան չգիտեն՝ ո՛ւր հանգչել, և ի մահուն բարձակիցք լինին:

25

Փարաւոն զմանկտին գետահեղձիկ առնէր. Աստուած զմարտիկս նորա ծովամոյն արար:

20

Մոլորութիւնը որչափ ի վեր ընծիւղին՝ նոյնչափ և ի խոր արմատանան:

Հ. Դ. ԱՌԵԱՆ